ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

2026 թվականի թիվ 329 – Ա

**«ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԱՐԻՆԵ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԱՍՎԱՐ ԼԻԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ և 163-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով «Կապանի թիվ 6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մ. Դավթյանի 08.07.2026թ.-ի դիմումը՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.**

1. «Կապանի թիվ 6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարինե Դավթյանին 2026 թվականի հուլիսի 13-ից օգոստոսի 7-ը ներառյալ տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի չօգտագործված մասը՝ 20 աշխատանքային օր:

2. Արձակուրդում գտնվելու ընթացքում «Կապանի թիվ 6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության դասվար Լիանա Գրիգորյանին:

3. Մարինե Դավթյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 10-ից:

09.07.2026

X

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Подписано: HARUTYUNYAN HAYK 1302840382

**Մարզպետին փոխարինող** **Հ. Հարությունյան**

2026թ. հուլիսի 9
Ք. Կապան